

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ հետ ԽԹԱՆԵԼՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԱՐՆԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Անտոնելլա Վալմորբիդա
Եվրոպական Միության հանուն տեղական ժողովրդավարության Գլխավոր Քարտուղար



Համագործակցություն Քաղաքացիական Հասարակության հետ խթանելու Հանրային Կառավարման Բարեփոխումները Արևելյան Գործընկերության երկրներում¹

Հեղինակ՝ Անտոնելլա Վալմորբիդա

Փաստաթղթի խնդիրները:

1. Բարձրացնելու իրազեկությունը և գիտելիքները հասարակական կազմակերպությունների հետ համատեղ աշխատելու հնարավորությունների և կարևորության վերաբերյալ՝ որպես հիմնական շահագրգիռ կողմեր՝ աջակցելու Արևելյան Գործընկերության երկրներում /ԱԼԳ/ Հանրային Կառավարման բարեփոխումներին /ՀԿԲ/ և

Ապակենտրոնացմանը

2. Ներկայացնել Հանրային Կառավարման բարեփոխումների հիմնական կետերը հասարակական կազմակերպությունների տեսակետից

Ներկայացնել ՔՀԿ –ների՝ Հանրային Կառավարման Բարեփոխմանն ու ապակենտրոնացմանը վերաբերող համագործակցության լավագույն փորձը

¹ Արևելյան Գործընկերության վերաբերյալ տարբեր տրամադրված են Տեղական և Հանրային Կառավարման Բարեփոխման ենթախմբի կողմից (փաստաթղթի վերջում կարող եք գտնել անդամների կազմը)

1. Հանրային կառավարման բարեփոխումների կարևորությունը / ենթատեքստը հարևանության երկրներում: Հանրային կառավարման Բարեփոխման և Ապակենտրոնացման դերը ամրապնդելու տեղական կառավարումը Հարևանության երկրներում

ՀԿԲ-ն և Ապակենտրոնացումը ներկայացնում են հարևանության քաղաքականության և ԱԼԳ-ի խնդիրների միջև վճռորոշ և խաչաձև տարրեր: Դրանք պարբերաբար ազդում են Երկրի կառավարմանը, գործելակերպին, ծառայություն մատուցելու կարողություններին, ինչպես նաև քաղաքացիների հետ հարաբերություններին: ՀԿԲ-ն ճիշտ գործող ժողովրդավար երկրի հիմնաքարն է: Եվրոպական Հարևանության քաղաքականությունը նպատակ ունի ապահովել արտոնյալ հարաբերությունների ներգրավվածություն և ստեղծել հատուկ պայմաններ առավել արդյունավետ համագործակցության համար: Եվրոպական Հարևանության քաղաքականության գործիքը և ԱԼԳ-ն ներկայացնում են Եվրոպական Միության և գործընկեր երկրների ընդլայնված խնդիրների շարք առաջընթացային տնտեսական ինտեգրման համար: Անհրաժեշտ

² Համագործակցություն Քաղաքացիական Հասարակության հետ խթանելու Հանրային Կառավարման Բարեփոխումները Արևելյան Գործընկերության երկրներում, Անտոնելլա Վալմորբիդա

է ստեղծել աշխատանքի համատեղ ուղիներ, որոնք կդրուին համագործակցությունը և համակցությունը:
Խոշորացման համընդհանուր գիտելիքներն այստեղ ներկայացված են այնպիսի տարրերով, որոնք հիմնված են կառավարման արժեքների և համակարգերի վրա. թափանցիկություն, հաշվետվողականություն, քաղաքականությունների արդյունավետություն, ժողովրդավարական ներկայացուցչություն և պայքար ընդդեմ կոռուպցիայի: Վերջնական շահառուները քաղաքացիներն են և բիզնեսի զարգացումը հանուն գոյքալ և արդար, համատեղ բարեկեցության:

1.1. Ինչու աշխատել քաղաքացիական հասարակության հետ խթանելու Հանրային Կառավարման Բարեփոխումը

ա/ ՀԿԲ-ն էական օրենսդրական գործընթաց ՉԻ, բայց ուժեղ շաղկապված է համայնքում մշակութային և կառուցվածքային տարրերի հետ: Հետևաբար կարևոր է քննության տակ դնել քաղաքացիների և կառույցների հարաբերությունների առկայությունը կամ բացակայությունը:

ՀԿԲ-ն և օրենսդրությունը չեն կարող զարգանալ առանց հաշվի առնելու տեղեկատվության հաստատուն գործընթացը, երկխոսությունը և քաղաքացիների հետ փոխանակումը, որը երկու կողմից վստահություն կհաստատվի, ընձեռնելով հետագայում հնարավորություն որոշակի կերպով օրենքների/դրույթների իրականացմանը:

բ/ ՀԿԲ-ն և ապակենտրոնացման գործընթացները անդրադառնում են իշխանությունների, իրավասությունների և պարտականությունների կազմակերպմանը: Գործընթացներին մասնակցում է երկու կարևոր բաղադրիչ՝ պետական կառույց և քաղաքացի: Երկուսին էլ անհրաժեշտ է կարողությունների կառուցման, վերապատրաստման և սեփական զարգացման գործընթաց: Եթե մենք իրականացնում ենք դասընթաց տեղական իշխանությունների համար /քաղաքական գործիչներ և քաղաքացիներ/, նույն հարկավոր է իրականացնել քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների համար: Բարեփոխումը պետք է անդրադառնա ինչպես կառավարմանն ու կառույցներին, այնպես էլ քաղաքացիական հասարակությանը:

գ/ Կառավարման այս երկու բաղադրիչները /ՀԿ-ներն ու քաղաքացիները և պետական կառույցները/ Չեն կարող զուգահեռաբար զարգանալ առանց միմյանց հետ հանդիպելու: Նրանց զարգացումը իրական կլինի ի շնորհիվ համատեղ, համագործակցային գործընթացների: Նրանց զարգացած կարողությունները պետք է կառուցվի համատեղ հաստատուն փոխանակման և երկխոսության ենթատեքստում: Չի կարող նպատակ համարվել *կատարյալ* օրենսդրական համակարգ ունենալը և ապա սկսել աշխատելը քաղաքացիների և կառավարման ուղղությամբ:

դ/ Քաղաքականություն մշակողների մասնակցությունը /տեղական և ազգային/ այնպիսի գործընթաց չի, որն իրականացվում է հերթականությամբ, օրենքով, բայց իրականում պետք է լինի “վարվելակերպ” դեպի մասնակցային կառավարումը: Այս “վարվելակերպը” պիտի շրջագծի ամբողջական մոտեցումը: Մասնակցային ժողովրդավարության արդյունավետ և նորագույն ուղին գալիս է ավելի քիչ ժողովրդավար երկրներից նոր գաղափարներով՝ համապատասխանելով քաղաքացիների և իշխանությունների միջև անջրպետին:

ե/Ընդհանուր առմամբ, գոյություն ունի օրենքների և կանոնների կարևորության և գերակայության ճանաչման գոյքալ խնդիր: Օրենսդրական գործընթացները գոյություն ունեն և երբեմն կարող են օգտակար լինել / օր՝ քաղաքացիների մասնակցությանը վերաբերող Հայաստանի օրենքում առկա տարբեր օրենսդրական դրույթները/, բայց խնդիր է դրանց կիրառելու և փաստորեն, գոյություն ունի անջրպետ օրենսդրության, իրական ընկալման և դրա արժեքի ճանաչման միջև:

զ/ Ինչու կենտրոնանալ Հարևանության վրա: Հարևանության քաղաքականությունն այնպիսի խնդիրներ է բարձրացրել, որոնց նպատակն է կառուցել համակարգեր, որոնք համապատասխանում են Եվրոպայի արժեքներին և կառավարմանը /աշխատանք, հանրային և սեփական, կառավարում/:

1.1.1. Հարևանությունում կարևոր համընդհանուր հարցերի վերաբերյալ քաղաքացիական հասարակության մոտեցումները

Հաշվի առնելով քաղաքացիական հասարակության խմբերի ակտիվությունը ՀԿԲ-ի ծրագրերում, որոշ հարցեր պահանջում են անհապաղ լուծում:

ա/ Քաղաքացիական ծառայության բարելավում: Բոլոր երկրներում քաղաքացիական ծառայությունը ներկայացվում է որպես վտանգված թեմա: Այս պարագայում թիրախ են. ա/ Քաղաքացիական ծառայության Ապաքաղաքականացումը բ/ աշխատելու համար արդյունավետ պայմանների ստեղծումը. գ/ քաղաքական և վարչական մարմինների հետ համակարգված արդյունավետ կապի ստեղծումը դ/ կոռուպցիայի հնարավորությունների նվազեցումը ե/ քաղծառայողների կարողությունները և ունակությունները զարգացումը իրականացնելու իրենց աշխատանքը

բ/ Տեղական իշխանությունների ապակենտրոնացումը և զարգացած կարողությունները, տեղական ժողովրդավարությունը, ֆինանսական ապակենտրոնացումը տեղական իշխանությունների առավել արդյունավետ գործունեության համար: Բոլոր երկրներում /հատկապես Արևելյան Գործընկերության երկրներում/ քաղաքապետարանները և տեղական ինքնակառավարման մարմինները շատ թույլ են և ի վիճակի չեն իրագործելու իրենցից սպասված դերը: Դրանցից շատերի համար գոյություն ունի մեկ փոխանցման ֆինանսավորման աղբյուր՝ պետության կողմից: Որոշ տեղական իշխանություններ հազիվ թե ունենան աղբյուրներ մինիմալ գործունեության համար և չեն կարող ներկայացնել որոշումների ընդունման իրական կենտրոն:

գ/ Մասնակցային մոտեցման բացակայություն: Քաղաքականության մշակման վերաբերյալ քաղաքացիների մասնակցության օրենսդրությունը /ներառյալ ՀԿԲ-ի տարրերը/ տարբեր է բազմաթիվ երկրներում: Որոշներն ավելի առաջավոր են, բայց ընդհանուր վերցրած երկխոսության և իրականացման պակաս ունեն: Օրենսդրական դրույթները բաց են թողնում քաղաքացիների և ՀԿ-ների հետ երկխոսության և ներգրավվածության հարթակները: Քաղաքացիական հասարակության և կառույցների միջև անջրպետը մեծ է, և շաղկապելու անհրաժեշտություն կա:

դ/ Թափանցիկության բացակայություն և կոռուպցիա: Պետական կառույցները /ազգային և տեղական/ գտնվում են կոռուպցիայի ազդեցության տակ, որը խոչընդոտում է տնտեսական, սոցիալական և ժողովրդավարական արդար աճին: ՀԿԲ-ն պետք է անդրադառնա կոռուպցիայի խնդրին, որը մշակութային է և անընդհատ:

Քաղաքացիական հասարակության հավելյալ արժեքը

Հանրային Կառավարման Բարեփոխման մեջ

ա/ **ՀԿ-ները որպես համայնքի շահագրգռ կողմեր:** ՀԿ-ները պետք է ընդգրկեն համայնքի բոլոր շահագրգռ կողմերին կանոնավոր փոփոխությունների մեջ: ՀԿ-ն խաչաձև գործընթաց է պետական և մասնավոր դերակատարների հետ: ՀԿ-ները ներկայացնում են համայնքային զարգացման հիմնական շահագրգռ կողմերը: ՀԿ-ները կարող են մոբիլիզացնել համընդհանուր ուշադրությունը և հանրային իրազեկությունը պատշաճ կառավարման և հաշվետու, հուսալի կառույցներ ունենալու կարևորության վերաբերյալ:

**** Հայաստանում «Տեղական ժողովրդավարության Գրասենյակ» հիմնադրամը** զբաղվում է պարզ և շատ հասանելի դասընթացների իրականացմամբ Գյումրիի/Շիրակի մարզի հիմնական դպրոցներում, որոնք վերաբերում են տեղական ժողովրդավարությանը և տեղական կառավարմանը: Աշակերտները սովորում են տեղական կառավարման հիմնական տարրերը, որոնք նշված են Եվրոպայի Խորհրդի Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայում: ^{2**}

բ/ **ՀԿ-ները կարող են տեղեկացնել և ներգրավել քաղաքացիներին** տեղեկատվության և կարծիքների հավաքագրմանը, քանի դեռ բարեփոխումների գործընթացը շարունակվում է և կարող են օգնել ստարածելու և իրականացնելու օրենսդրական դրույթները: ՀԿ-ները կարող են իրականում դառնալ ՀԿ-ի գործընկերներ որպես միջնորդ՝ քաղաքացիների և կառույցների միջև:

**** Ուկրաինայում Դնիպրոյի Տեղական ժողովրդավարության Գրասենյակն** իրականացնում է մի շարք դասընթացներ բացատրելու քաղաքացիներին տարածքային բարեփոխումների կանոնները և ազդեցությունը Ուկրաինայում: Նրանք տրամադրում են երկրի մյուս մասի կարևոր գործընթացների վերաբերյալ պարզ և հասանելի տեղեկություն: Դնիպրոպետրովսկի շրջանը համագործակցում է տեղի քաղաքացիական հասարակության խմբի հետ:³

***** Բելառուսում** քաղաքացիական հասարակության դերն առանձնապես կարևոր է: Այն կազմակերպվում է հիմնականում Արևելյան Գործընկերության Քաղաքացիական հասարակության Ֆորումի Ազգային Ղլատֆորմի միջոցով: Այս երկրում տեղական իշխանությունների մարդկային ներուժը բավարար չի: Չնայած դժվարություններին՝ որոշ դեպքերում մենք հանդիպում ենք ՀԿ-ների փորձագիտական խորհուրդների, օր՝ քաղաքացիների անկախ խումբ, որը նպատակ ունի լուծելու հատուկ խնդիրներ տեղական մակարդակում: Մրանք հիմնականում հաստատվել են՝ շաղկապվելով սոցիալական և մշակութային միջոցառումների, բնապահպանության, երիտասարդության և առողջապահության հետ:

2 http://www.alda-europe.eu/newSite/lda_dett.php?id=13

3 http://www.alda-europe.eu/newSite/lda_dett.php?id=14

4 <http://www.ladder-project.eu>

5 http://www.coe.int/t/congress/Texts/conventions/charte_autonomie_e_en.asp

6 <http://www.coe.int/en/web/ingo/civil-participation>

7 <http://reforms.in.ua/en/skorkardy>

գ/ **ՀԿ-ները, որ աշխատում են պետական կառույցների հետ**, ի գործում են աշխատել այս թեմայի ուղղությամբ մշակութային մակարդակում, և նրանք կառուցում են վստահություն խնդրի լուծման իրազեկման գործընթացի շնորհիվ: Ունենալով ուղիղ կապեր՝ ընտրված ներկայացուցիչները կարող են հանդիպել և աշխատել քաղաքացիների և ՀԿ-ների հետ և ներգրավել երկխոսության մեջ, որից կօգտվի ամբողջ համայնքը:

Վրաստանի Համայնքների Միությունը մշակել է երկու տարվա ծրագիր՝ մոբիլիզացնելու քաղաքացիներին տեղական ժողովրդավարության համար: Նրանք դիմել են և վերապատրաստել համայնքի ղեկավարներին ստեղծելու կառուցողական երկխոսություն տեղական իշխանությունների հետ: Այս ծրագրի շրջանակում հազարավոր քաղաքացիներ են մասնակցել դասընթացներին Վրաստանում՝ այսպիսով էպետ մեծացնելով երկրում տեղական իշխանությունների դերի վերաբերյալ ընկալումը: Եվրոպական Միության հանուն Տեղական ժողովրդավարության **LADDER** ծրագիրը ստեղծում է իրազեկման բարձրագույն լայն հարթակ՝ ստիպելով տեղական իշխանություններին և ՀԿ-ներին համատեղ աշխատելու գլոբալ քաղաքացիական և համընդհանուր պարտականությունների ուղղությամբ:⁴

դ/ **ՀԿ-ները կարող են աշխատել մասնակցային գործընթացների** և պետական քաղաքականության մշակման վարվելակերպի ուղղությամբ ինչպես տեղական այնպես էլ ազգային մակարդակում: Մասնակցային գործընթացների հավելյալ արժեքը խնդիրներ առաջադրելու լավագույն լուծումների հնարավոր ճանաչումն է և քննադատական հետաքրքրությունների միջամտությունը:

Հայաստանում, Դիլիջան քաղաքը ֆինանսավորել և աջակցել է որոշ տեղի նախաձեռնություններին, որոնք առաջարկվել էին քաղաքացիների հետ խոհրդակցելու արդյունքում: Գործընթացը մասնակցային էր, որին ներգրավվեցին պետական կառույցներն ու տեղական ՀԿ-ները: **Տեղական Կառավարման Ենթախումբը և ԱԼԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի ՀԿ-ն** ներկայացրեցին Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիների մասնակցության վերաբերյալ մի զեկույց/կցված է/՝ կարևորելով տարբեր հնարավոր փաստաթղթեր, որոնք են. Եվրոպայի Խորհրդի տեղական Բնքնակառավարման խարտիան և քաղաքացիների մասնակցության Լրացուցիչ արձանագրությունը ⁵: ինչպես նաև «Ռոշոմումների ընդունման գործընթացում քաղաքացիական մասնակցության պատշաճ փորձի ուղեցույց»⁶:

***** Ուկրաինայում** քաղաքացիական հասարակության երկու պլատֆորմներ ստեղծվեցին աջակցելու այս գործընթացներին. “Բարեփոխման վերականգնման փաթեթ” և “Նոր երկիրը”: Այս պլատֆորմների փորձագետները ազդեցություն ունեցան բարեփոխումների բովանդակությանը Խորհրդարանում և Կառավարությունում: Գոյություն ունի երկխոսության արդյունավետ հանձնաժողով քաղաքացիական հասարակության փորձագետների և կառույցների միջև: Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի ազգային պլատֆորմը արդյունավետորեն ներառված է կառույցների հետ այս երկխոսության մեջ: Նույնիսկ Հանրային Ծառայության բարեփոխումը այս համագործակցության հաջողություններից մեկն է: Խորհրդատվական մարմին է ստեղծվել քաղաքացիական ծառայության հարցերով զբաղվող Ազգային գործակալության ներսում, որտեղ ՀԿ-ները հատկապես ակտիվություն ցուցաբերեցին ճանաչելու օրենսդրական քայլերը: Այժմ նույնիսկ այս բարեփոխման մշտադիտարկման խմբի մեջ ներգրավված են նաև ՀԿ-ների ներկայացուցիչներ:⁷

ե/ Համայնքի զարգացման մոտեցման համատեղ աշխատանքի գործընթացի կառուցում:

Լուծումը ճանաչելու համատեղ գործընթացը / ՀԿ-ներ և հանրային կառույցներ տեղական և ազգային մակարդակում/ ստեղծում է խնդիրներին անդրադառնալու լավագույն հնարավորություններ այսպիսի դժվար պայմաններում, որին շատ հաճախ մենք հանդիպում ենք հարևանության երկրներից շատերում: Քաղաքացիների իրազեկման գործընթացը բարելավում է հանրային կապերի համար համընդհանուր պատասխանատվությունը և բացում հանրային կառույցների հետ երկխոսություն:

Բելառուսում, որոշ ենթադրամաշնորհների գործողություններ նախաձեռնվել են ԼԵՎ Սաֆիե հիմնադրամի, քաղաքացիների կենտրոնների և Եվրոպական Միության հանուն տեղական ժողովրդավարության կողմից համատեղելու ՀԿ-ների և տեղի կառույցների ջանքերը: Օրագրին աջակցում են Եվրոպական Միությունը հանուն տեղական ժողովրդավարության և Եվրոպական Հանձնաժողովը – Օրագրի Տանդեմ II /սպորտային խաղահրապարակի վերակառուցում, հեծանվային ճանապարհ կայուն տուրիզմի համար, մշակութային ժառանգություն և այլն.../:

8. Հատուկ մեջբերում: Վրաստանի վերաբերյալ – բարելավել ֆինանսական ապակենտրոնացման իրավական հիմքերը / Վրաստանի Ինքնակառավարման Օրենսգիրք և Բյուջեի վերաբերյալ Օրենսգիրք/՝ ապահովելով քաղաքապետարանների անկախությունը և բյուջետավարման աղբյուրները և նվազեցնել կենտրոնական կառավարության իշխող դիրքը պետական ֆինանսներում, որոնք հատկացվում են քաղաքապետարանների կարիքներին:
Հատուկ մեջբերում Ադրբեջանի վերաբերյալ – Բաքու քաղաքում եզակի քաղաքապետարանի հիմնադրման իրավական հիմքերը հարկավոր է վերացնել և հատուկ օրենք ընդունվի «Բաքու քաղաքի կազմվիճակի» վերաբերյալ կարգավորելու կոմպլեքս հարաբերություններ Բաքու քաղաքի կարգավիճակի շուրջ: Տեղական պետական ֆինանսական բարեփոխման երկրորդ փուլը պետք է հանգեցնի տեղական կառավարման մարմինների ֆինանսական հիմքի հզորացմանը: Ֆինանսական ապակենտրոնացման բարեփոխման իրականացման երկրորդ փուլը հանդիսանում է կարևոր տարր ամբողջ ապակենտրոնացման գործընթացի հաջողության համար: Այս հարթությունում առանց ճշգրիտ գործողությունների և իրական առաջընթացի գոյություն ունի ամբողջ բարեփոխման վարկաբեկման ռիսկ:
Հարկավոր է ներդրումային ծրագրեր ֆինանսավորելու պետական ֆինանսների հատկացման՝ ընթացիկ համակարգի վերանայումը՝ հաստատելով պարզ կանոններ բարձրացնել թափանցիկությունը և ներգրավվածությունը տեղական իշխանությունների և քաղաքացիական հասարակության վերահսկողական խորհրդում՝ հիմնված գույգության չափանիշների վրա:
9. Մեջբերում Մոլդովայից:
Ստեղծել համապատասխան ինստիտուցիոնալ շրջանակ Կառավարական և Խորհրդարանական մակարդակում ապահովելու հանրային կառավարման բարեփոխումների պատված իրականացումը և ապակենտրոնացումը:
Կառավարական մակարդակում դա կարող է կլինի Վարչապետի տեղակալը ապակենտրոնացման բարեփոխման, մարզային զարգացման համար՝ ամրապնդելով տեղական ինքնավարությունը և հանրային կառավարման բարեփոխումը: Խորհրդարանական մակարդակում, ապակենտրոնացման հատուկ հանձնաժողովը և տեղական ինքնավարությունը պետք է վերականգնվի:

ՀԿ-ի բարելավման վերաբերյալ հանձնարարականներ և ՀԿ-ների ներգրավումը

Քաղաքացիական հասարակության տեսանկյունից, հետևյալ քայլերը և առաջնահերթություններն են առաջարկվում բարձրացնելու մեր ընդհանուր աշխատանքի ազդեցությունը իրականելու Հանրային կառավարման բարեփոխումները Հարևանության երկրներում:

ա/ Բարձրացնել **ապակենտրոնացման** աջակցությունը և ամրապնդել տեղական իշխանություններին, տեղական ժողովրդավարությանը՝ ներառելով **ֆինանսական ապակենտրոնացումը**⁸: Օրենսդրությունը պետք է ապահովի քաղաքապետարանների կարգավիճակը սահմանող չափորոշիչները⁹: Նրանց հարկավոր են կայուն ֆինանսական ռեսուրսներ, որպեսզի կարողանան իրականացնել իրենց պարտականությունները, և Հարկերի համակարգի կիրառման հնարավորությունները պետք է հաշվի առնվեն՝ փոփոխություններ կատարելով օրենսդրության մեջ:

բ/ Աշխատել **խթանելու ինչպես տեղական իշխանությունների / ընտրված և պետական ծառայողներ/, այնպես էլ քաղաքացիական հասարակության կարողությունները և իրազեկումը** տեղական կառավարման կարևորության և դերի ու համատեղ աշխատանքի հնարավորությունների վերաբերյալ

գ/ Շարժվել դեպի **տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի սկզբունքների** վավերացմանը, հավասարեցմանը և իրականացմանը և Եվրոպայի Խորհրդի «**Ռոշումների ընդունման գործընթացում քաղաքացիական մասնակցության պատշաճ փորձի ուղեցույց**»-ի կողմից առաջարկված սկզբունքների և գործիքների օգտագործմանը:

դ/ Կենտրոնանալ **Տեղական ժողովրդավարության** վրա – ընկալվում է որպես իշխանությունների ապակենտրոնացում, կարողություններ և պատասխանատվություն, որոնք ենթադրում են տեղական մակարդակում ընտրություններ, ինչպես նաև տեղական համայնքի հայեցակարգի զարգացում, հաշվետվողականություն, թափանցիկություն, համագործակցություն պետական շահագրգիռ կողմերի և քաղաքացիական հասարակության միջև:

ե/ Կենտրոնանալ և հզորացնել **տեղական իշխանությունների ստացիացիաները** և **քաղաքացիական հասարակության համացանցերը**, քանի որ համատեղ աշխատանքն ունի լայն ազգային ազդեցություն:

զ/ **հանրային ծառայության արդյունավետ մատուցման համակարգերի** ներկայացում՝ համագործակցելով ՀԿ-երի հետ

է/ Բարձրացնելու **քաղաքացիական հասարակության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում տեղական և ազգային մակարդակում** օրենսդրության ամբողջական իրականացման և առավել հնարավորությունների ճանաչման հետ միասին

ը/ սահմանել **բարեփոխման ոլորտները/կամ ոլորությունն ու մակարդակը, որտեղ տեղական և միջազգային ՀԿ-ների աղբյուրներն** արդյունավետ կօգտագործվեն:

թ/ **Ապահովել ՀԿ և Պետական ծառայության Օրենքում իրականացման պլանավորման գործընթացում ՀԿ-ների ներգրավվածությունը:**

ժ/ **Զարգացնել և իրականացնել մշտական ինստիտուցիոնալ երկխոսության մեխանիզմներ** Կառավարության, Խորհրդարանի, կենտրոնական իշխանությունների միջև մի կողմից, և տեղական հանրային կառավարման, քաղաքացիական հասարակության,

⁸ Համագործակցություն Քաղաքացիական Հասարակության հետ իրականելու Հանրային Կառավարման բարեփոխումները Արևելյան Գործընկերության երկրներում, Անտոնելլա Կալմորբիոյ

ուղորտի փորձագետների միջև, մյուս կողմից:

ի/ Կենտրոնացնել և հզորացնել **ընդհանուր գործողությունները** /պլանավորում, գործընթացների մշակում և իրականացում/ **ՀԿ-ների և հանրային կառույցների** միջև: Համատեղ աշխատանքը արդյունավետ ՀԿԲ զարգացնելու լավագույն տարբերակն է:

Վ/ համատեղ աշխատանքի համար **կենտրոնանալ միկրո աջակցության վրա:** Ենթադրամաշնորհները կարող են հանդիսանալ լավ հնարավորություն տարածելու համագործակցության և իրագրելիության բարձրացման նախաձեռնությունները ամբողջ երկրում և ի վիճակի լինել հասնելու հեռավոր շրջաններ:

Կցում 1 – Արևելյան Գործընկերության քաղաքացիական Ֆորումի Տեղական և Հանրային Կառավարման Բարեփոխման Ենթախմբի անդամներ՝

- Անտոնելլա Վալմորբիդա, Տեղական ժողովրդավարության Գրասենյակների հիմնադրամ,

- Ֆրանսիա, **Ենթախմբի** **համակարգող**
antonella.valmorbida@aldaintranet.org
- Uliana Poltavets – **Լաբորատորիա, Ուկրաինա**, u.poltavets@laboratory.kiev.ua, kohut@laboratory.kiev.ua
 - Դավիթ Թումանյան – **Համայնքների Ֆինանսիստների միություն**, Երևան, Հայաստան, dtumanyan2003@yahoo.com
 - Սերենա Ֆուսկո – **CISP**, Իտալիա (ծրագիր Հայաստանում), fusco@cisp-ngo.org
 - Միրոսլավ Կոբասա – **Լեվ Սաֆիե հիմնադրամ Բելառուս**, levsapieha@gmail.com
 - Կուլարի Վոլոդյմիր – **CCC Creative Centre**, Կիև, Ուկրաինա, volodymyr.kuprii@gmail.com
 - Սամիր Ալիև – **BINA Alliance**, **Ադրբեջան**, samir_aliyev@yahoo.com
 - Էկա Ուրուշաձե – **CSR DG – Վրաստան**, eurushadze@gmail.com
 - Վեչեսլավ Բուլաթ – **Քաղաքային զարգացման ինստիտուտ, Մոլդովա**, office@idu-moldova.org

Co-funded by the
Europe for Citizens Programme
of the European Union



www.alda-europe.eu

